

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2023-2024 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

20 սեպտեմբերի 2023թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 18-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ. Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դ.գ.թ., ասիստենտ Լ. Սահակյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի Կանոնակարգի նախագծի քննարկման և հաստատման հարցը: **Զեկուցող՝ Ա. Մկրտչյան:**
2. Ֆարմացիայի ինստիտուտում ՀՀ պետական բյուջեից գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ կատարված թեմաների շրջանակներում իրականացված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունների քննարկում և հաստատում:
Զեկուցողներ՝
 - ք.գ.թ., դոցենտ Հայարփի Միմոնյան
 - ք.գ.թ., դոցենտ Ավետիս Ծատուրյան
3. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի Կանոնակարգի նախագծի քննարկման և հաստատման հարցը:
Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն ք.գ.թ., դոցենտ Աննա Մկրտչյանին, ով ներկաներին հաղորդեց այն մասին, որ փոխվել է ԵՊՀ ստորաբաժանման օրինակելի կանոնակարգը, որի հիման վրա անհրաժեշտ է կազմել և հաստատել

նան Ֆարմացիայի ինստիտուտի նոր կանոնակարգը: Գիտքարտուղար Լ. Սահակյանը հավելեց, որ կանոնակարգի նախագիծը նախապես ուղարկվել է գիտխորհրդի անդամներին՝ ծանոթանալու և առաջարկներ ներկայացնելու համար:

Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ Ս. Վարդապետյանը, Ա. Հովհաննիսյանը, Ս. Պետրոսյանը, ովքեր առաջարկեցին հաստատել նոր կանոնակարգի նախագիծը:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն), հաստատել ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի նոր կանոնակարգը:

2. Ֆարմացիայի ինստիտուտում ՀՀ պետական բյուջեից գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ կատարված թեմաների շրջանակներում իրականացված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունների քննարկում և հաստատում:

Լսեցին՝

2.1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ., դոցենտ Հայարփի Սիմոնյանին, ով համառոտ ներկայացրեց 21T-1D057 ծածկագրով «Ոչ սպիտակուցային ալֆա-ամինաթթուների և պեպտիդների վրա հիմնված համակարգերի սինթեզ և կենսաբանական գնահատում» վերնագրով թեմայի կատարման երկրորդ տարվա հաշվետվությունը:

Հ. Սիմոնյանը նշեց, որ գիտական թեմայի հետազոտական աշխատանքներն իրականացվել են ըստ նախօրոք հաստատված օրացուցային պլանի: Հաշվետու ժամանակաշրջանում հետազոտվել են նիկելի դեհիդրոամինաթթվային կոմպլեքսներին հետերոցիկլիկ և արոմատիկ օղակներ պարունակող նուկլեոֆիլների միացման ռեակցիաները, ինչի արդյունքում սինթեզվել են էնանտիոմերապես հարստացված նոր ոչ սպիտակուցային α -ամինաթթուներ և մեկ ամինաթթվի պաշտպանված ածանցյալ: Սինթեզված միացությունները փոխանցվել են Իտալիայի Նեապոլի «Կենսակառուցվածքների և կենսաիմիջինգի» ինստիտուտի կենսաբանական սկրինինգի լաբորատորիա՝ հակաքաղցկեղային

հատկությունների ուսումնասիրման նպատակով: Արդյունքները ամփոփելուց հետո, աշխատանքը կներկայացվի տպագրության:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ է այցելել գիտական թեմայի խորհրդատու Ջիովանի Ռովիելոն, ով հանդիպումներ է ունեցել գիտական խմբի անդամների հետ, քննարկվել են հետագա անելիքները: Այցի ընթացքում Ջիովանի Ռովիելոն հանդես է եկել նաև զեկույցով, ներկայացրել է իր գիտական ուղղությունը և թեմայի շրջանակներում կատարված համատեղ հետազոտական աշխատանքները:

Հ. Միմոնյանը նշեց, որ գործուղվել է Նեապոլի «Կենսակառուցվածքների և կենսաիմիջինգի» ինստիտուտ, որտեղ սեմինար-քննարկումների ընթացքում ամփոփվել են կատարված աշխատանքները և կազմվել է առաջիկա մեկ տարվա հետազոտական աշխատանքների պլան:

2.2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի դոցենտ ք.գ.թ. Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանին, ով համառոտ ներկայացրեց 22YR-1E011 ծածկագրով «Ֆտորի քանակի որոշում ՀՀ կենցաղային ջրերում և համեմատական վերլուծություն» վերնագրով թեմայի շրջանակներում մեկ տարվա ընթացքում կատարված գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Հաշվետվությունը ներառում է ՀՀ պետական բյուջեից գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ կատարված թեմայի շրջանակներում ստացված արդյունքները:

Ա. Ծատուրյանը նշեց, որ գիտական թեմայի հետազոտական աշխատանքներն իրականացվել են ըստ նախօրոք հաստատված օրացուցային պլանի: Հաշվետու ժամանակաշրջանում հետազոտվել են ՀՀ տարբեր մարզերից բերված կենցաղային ջրերը՝ ըստ ֆտորի քանակական պարունակության: Աշխատանքները գտնվում են ընթացքի մեջ և արդյունքներն ամփոփելուց հետո, կներկայացվեն տպագրության:

Որոշեցին՝ (միաձայն)

1. հաստատել Հ. Միմոնյանի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Ոչ սպիտակուցային ալֆա-

ամինաթթուների և պեպտիդների վրա հիմնված համակարգերի սինթեզ և կենսաբանական գնահատում» վերնագրով թեմայի երկրորդ տարվա հաշվետվությունը:

2. հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Ֆտորի քանակի որոշում ՀՀ կենցաղային ջրերում և համեմատական վերլուծություն» վերնագրով թեմայի առաջին տարվա հաշվետվությունը:

3. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ,
ք.գ.թ., դոցենտ՝

Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար,
դ.գ.թ., ասիստենտ՝

Լ. Սահակյան